ЮБИЛЕИ



ՎԻԼԵՆ ՊԱՐՈՒՅՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ
(ծննդյան 60 ամյակի առթիվ)

Լրացավ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ռեկտոր, «Մխիթար Հերացու» շքանշանակիր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, միջազգային մի շարք ակադեմիաների պատվավոր անդամ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, բժշկական ծառայության գնդապետ Վիլեն Պարույրի Հակոբյանի ծննդյան 60 ամյակը:

Վ.Պ. Հակոբյանը ծնվել է ՀՀ Թալինի շրջանի Գառնահովիտ գյուղում, ծառայողի ընտանիքում: 1960թ. ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետը, որից հետո աշխատել է Արթիկի շրջանում՝ որպես գյուղական բժշկական տեղամասի վարիչ: 1962թ. տեղափոխվել է մայր բուհի՝ գիտամանկավարժական հարուստ ավանդույթներ ունեցող ֆարմակոլոգիայի ամբիոն, որի աշխատանքներն ավելի քան կես դար գլխավորել է հանրապետության դեղաբանության դպրոցի հիմնադիրներից մեկը՝ բազմավաստակ գիտնական, ՀԽՍՀ ԳԱ թղթ. անդամ, պրոֆեսոր Ս.Հ. Միրզոյանը: Հենց այս ամբիոնում էլ, աճեց և որպես գիտնական, մանկավարժ ու բարձրագույն կրթության կազմակերպիչ ձևավորվեց Վ.Պ. Հակոբյանը:

Բեղուն է Հակոբյանի հասարակական գործունեության ուղին. 1971թ. մինչև 1987թ. ակտիվորեն մասնակցել և արդյունավետ գործունեություն է դրսևորել համալսարանական աշխատանքների տարբեր օղակներում՝ արտասահմանցի ուսանողների և բուժական ֆակուլտետի դեկան, կուսկոմիտեի քարտուղար, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, 1987թ. առ այսօր ԵրՊԲՀ-ի ռեկտոր, 1994թ. առ այսօր ԵրՊԲՀ-ի ֆարմակոլոգիայի ամբիոնի վարիչ: 1967թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1977թ՝ դոկտորական թեզերը:

Վ.Պ. Հակոբյանի՝ գիտամանկավարժական և հասարակական գործունեության այսօր արդեն 35ամյա բարձունքից հետադարձ հայացք նետելով՝ վստահաբար կարող ենք հավաստել, որ այդ տարիները եղել են հարազատ ժողովրդին ու գիտությանը անմնացորդ նվիրումով ծառայելու, հանրապետության համար բժշկական բարձրորակ կադրեր պատրաստելու արգասաբեր տարիներ:

Նրա հետևողական գործունեության շնորհիվ Երևանի պետական բժշկական ինստիտուտը վերակազմավորվեց համալսարանի (մարտ, 1995): Մեծացել է համալսարանի միջազգային ճանաչումը: Վստահորեն կարելի է ասել, որ նաև Վ.Պ. Հակոբյանի ջանքերի շնորհիվ է, որ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանը դարձել է աշխարհի այն սակավաթիվ բժշկական բարձրագույն ուսումնական հաստատություններից մեկը, որն իր պատվավոր տեղն

է գրավում Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության գրացուցակում, և որի դիպլոմը ճանաչվում է Եվրոպայի, Ամերիկայի, Մերձավոր Արևելքի, Ասիայի բազմաթիվ երկրներում: Այժմ բժշկական համալսարանում սովորում են ավելի քան 600 արտասահմանցիներ:

Վ.Պ. Հակոբյանի մեծագույն ջանքերի շնորհիվ այսօր համալսարանը մասնակցում է «Տասիս» ծրագրին, որը կարող է նպաստել ուսումնական գործընթացի մակարդակի առավել բարձրացմանը. արդեն տասնյակների է հասնում այն դասախոսների թիվը, որոնք գործուղվել են Եվրոպա, առաջնակարգ բժշկական համալսարաններում ծանոթացել այնտեղ կիրառվող ուսուցման մեթոդներին ու եղանակներին և վերադառնալուց լավագույնները ներդրել իրենց ամենօրյա գիտամանկավարժական գործունեության մեջ: Կնքվել են փոխհամագործակցության պայմանագրեր մի շարք երկրների (ՌԴ, ԱՄՆ, Հնդկաստան, Ֆրանսիա, Հունաստան, Բելգիա, Սիրիա և այլն) հետ, մշակվել գիտական ու գիտամանկավարժական կարևոր ծրագրեր:

Ճանաչված բժիշկ-գիտնականի և բժշկական բարձրագույն կրթության հմուտ կազմակերպչի անունը վաղուց հայտնի է դարձել հանրապետության սահմաններից դուրս և ձեռք բերել միջազգային ճանաչում: Անվանի դեղաբանը, մեծահամբավ մանկավարժն ու կազմակերպիչն իր բացառիկ գիտական գործունեության արդյունքում ընտրվել է Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի անդամ (1990), Լեհաստանի բժշկական գիտությունների ազգային ակադեմիայի (Վարշավա, 1997) և միջազգային շուրջ 7 ակադեմիաների անդամ, այդ թվում՝ բարձրագույն դպրոցի միջազգային ակադեմիայի (Մոսկվա, 1995), ինչպես նաև ՌԴ ֆարմակոլոգների վարչության անդամ (Մոսկվա, 1985), անոթաբանների միջազգային քոլեջի գիտական խորհրդի պատվավոր անդամ (Նյու-Յորք, 1993), դեղագործության միջազգային ֆեդերացիայի (FIP) (Հագու, Նիդերլանդներ, 1996) և ֆարմակոլոգների միջազգային ընկերության (IUPHAR) անդամ (Բրյուսել, Բելգիա, 1996):

Վ.Պ. Հակոբյանը հանդիսանում է ՀՀ ԳԱԱ «Հայաստանի բժշկագիտություն» հանդեսի գլխավոր խմբագիր, Ռուսաստանի բժշկական գիտությունների ակադեմիայի «Փորձարարական և կլինիկական ֆարմակոլոգիա» հանդեսի խմբագրական խորհրդի (Մոսկվա, 1993), Իրանի Իսլամական Հանրապետության «Բժշկական միջազգային ամսագրի» խմբագրական խորհրդի անդամ (Թեհրան, 1996), բժշկական խմբագրությունների միջազգային ընկերության «Հույս» նախագծի մասնակից (WAME) (Վիրջինիա, ԱՄՆ, 1996):

Ակադեմիկոս Վ.Պ. Հակոբյանի գիտամանկավարժական գործունեությունն արտացոլված է նրա ավելի քան 200 գիտական աշխատություններում, որոնց մեծ մասը՝ միջազգային գիտական հանդեսներում, 9 հեղինակային վկայականներում, 5 մենագրությունում (որից 2-ը հրատարակվել են Մոսկվայում), ամբիոնի աշխատակիցների հետ միասին՝ բժշկական բուհերի ուսանողների համար դեղաբանության հայերեն 2 դասագրքերում:

Ուսումնական գործընթացում ուսուցման նորագույն մեթոդների և տեխնոլոգիայի ներդրման համար Վ.Պ. Հակոբյանը արժանացել է ԽՍՀՄ ժողովրդական կրթության պետական կոմիտեի դիպլոմի (Մոսկվա, 1990), ՀՀ Կառավարական պարգևի՝ Մխիթար Հերացու մեդալով ՀՀ Անկախության 7-րդ տարելիցի կապակցությամբ (Երևան, 1998թ.), պարգևատրվել է Ալբերտ Շվեյցերի դիպլոմով և Ոսկե մեդալով՝ (Վարշավա, 1998):

Նա բազմիցս հրավիրվել և զեկուցումներով հանդես է եկել միջազգային բազմաթիվ գիտաժողովներում, աշխարհի տարբեր երկրներում, այդ թվում՝ ԱՊՀ երկրներում, Ֆրանսիայում, Իտալիայում, Կանադայում, Նիդերլանդներում, Գերմանիայում, Լեհաստանում, Բուլղարիայում, Հունգարիայում, ԱՄՆ-ում, Իսրայելում և այլն:

Վ.Պ. Հակոբյանը տասնամյակներ շարունակ զբաղվել է կենտրոնական նյարդային համակարգի արյան շրջանառության ուսումնասիրության հարցերով,

մասնավորապես, կենտրոնական նյարդային համակարգի արյան շրջանառության վրա ընդերածին նյութերի ազդեցության և ինքնակարգավորման մեխանիզմների, ինչպես նաև բնականոն պայմաններում և ախտաբանական վիճակներում ուղեղի արյան հեմոդինամիկայի կարգավորման գործում գամմա-ամինոկարագաթթվի համակարգի դերի բացահայտմամբ: Նա հաջողությամբ զարգացրել է պրոֆ. Ս.Հ. Միրզոյանի և իր կողմից առաջադրած ուղեղային արյան շրջանառության ինքնակարգավորման նյարդաքիմիական տեսությունը:

Կենտրոնական նյարդային համակարգի ինտեգրատիվ գործունեության մեջ զանազան նյարդակտիվ գործոնների դերի նպատակաուղղված հետազոտությունների շնորհիվ Վ.Պ. Հակոբյանը աշխարհում առաջին անգամ բացահայտեց նյարդաակտիվ ամինաթթուների կարգավորիչ դերը ուղեղային արյան շրջանառության վրա: Մասնավորապես բացահայտված է, որ կենդանիների ուղեղային արյունահոսքի ընկճման պայմաններում շարժական ակտիվության բարձրացումը նպաստում է ուղեղային արյունահոսքի լավացմանը, որն ունի գործնական մեծ նշանակություն սակավաշարժ կենսաձևի պայմաններում ուղեղային արյունահոսքի թուլացման կանխարգելման համար:

Անցումային շրջանի 1992-95 թվականներին, տնտեսական ու էներգետիկ ճգնաժամի, ցուրտ ու խավարի, կենցաղային անտանելի պայմաններում անգամ, Երևանի պետական բժշկականը՝ շնորհիվ հմուտ ղեկավարության, հանրապետության այն եզակի հիմնարկություններից էր, որ կարողացավ ունենալ անխափան էլեկտրաէներգիա և ջեռուցում և ոչ միայն կարողացավ պահպանել իր աշխատանքի բնականոն գործընթացը, այլև նկատելի վերընթաց ապրեց:

Պատշաճ ձևով գնահատելով մեր անկախ պետականության համար ֆիզիկապես ամուր, առողջ և մարտունակ բանակ ունենալու և բանակը բարձրորակ զինվորական բժիշկներով ապահովելու կարևորությունը՝ Վ.Պ. Հակոբյանի անմիջական մասնակցությամբ 1993թ. համալսարանում հիմնադրվեց և այսօր էլ հաջողությամբ գործում է ռազմաբժշկական ֆակուլտետը:

Վ.Պ. Հակոբյանը համարվում է ՀՀ Առողջապահության նախարարության Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի մասնագիտական խորհրդի նախագահ:

Վ.Պ. Հակոբյանը ջանք ու եռանդ չի խնայում, որպեսզի բժշկական համալսարանի ուսանողները ստանան մասնագիտական խոր գիտելիքներ, դառնան գիտության ժամանակակից պահանջների համապատասխան որակյալ մասնագետ բժիշկներ և դեղագետներ: Լինելով մեծապես խստապահանջ՝ ինչպես իր, այնպես էլ շրջապատի նկատմամբ, հետևողական, անզիջում և սկզբունքային ղեկավար, նա արժանիորեն վայելում է ուսանողների և աշխատակիցների սերն ու հարգանքը:

Նա այսօր էլ երիտասարդական ավյունով ու եռանդով շարունակում է իր արգասաբեր գործունեությունը՝ ի շահ բժշկական Մայր բուհի հետագա բարգավաճման, հայրենական բժշկագիտության զարգացման ու ժողովրդի առողջության պահպանման:

Երևանի պետական բժշկական համալսարանի կոլեկտիվը, ՀՀ ԳԱԱ նախագահությունը, «Հայաստանի բժշկագիտություն» հանդեսի խմբագրությունը շնորհավորում են ակադեմիկոս Վ.Պ. Հակոբյանին իր ծննդյան առթիվ և ցանկանում հետագա նորանոր արգասաբեր տարիներ :